

Հողորդագրութիւն Հրանդ Տիկը Սպաննուած

Խոր ցաւով եւ ընդվզումով իմացանք անարգ ոճիրի մը որպէս արդիւնք՝ Պոլսահայ ականաւոր ազգային գործիչ, «Ակօս» թերթի գլխաւոր խմբագիր եւ մտաւորական՝ Հրանդ Տիկըի սպաննութիւնն ու մահը:

Հրանդ Տիկը, յատկապէս վերջին տարիներուն իր վրայ կեդրոնացուց համաշխարհային մամուլին ուշադրութիւնը, որպէս ազատ խօսքի, մարդկային իրաւունքներու, ճշմարտութիւն եւ արդարութեան ախոյեան մը:

Հայոց դէմ գործուած Յեղասպանութեան իրականութիւնները քաջօրէն հրապարակելուն եւ պաշտպանելուն համար ան Թուրքիոյ իշխանութիւններուն կողմէ բացայայտօրէն հալածուեցաւ, կրատական հետապնդումներու ենթարկուցաւ ու մինչեւ իսկ բանտարկուեցաւ:

Այս անարգ ոճիրը կու գայ աներկբայօրէն հաստատելու, թէ ցեղասպան Թուրքիոյ մէջ ոչինչ փոխուած է ու մարդասպանական բնագոյնները կը շարունակեն գործել նոյնութեամբ:

Յանուն Գանատայի Հայոց Ազգային Առաջնորդարանին Առաջնորդ Սրբազան Հօր՝ Գերշ. Տ. Խաժակ Արք. Յակոբեանին, Ազգային Վարչութեան կրօնական եւ քաղաքական ժողովներուն, հոգեւորականաց դասուն, համայն մեր ժողովականութեան ու հաւատացեալներուն մեր անհուն վշտակցութիւնը կը յայտնենք հանգուցեալին հարազատներուն:

Յիշատակն արդարոյն Օրինութեամբ եկեղեցի:

Դիւան
Ազգային Առաջնորդարանի